ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆԲ.

Կոնդակ յանուն Տ. Տ. Մեսրոպ վարդապետի Տէր Մովսէսեան, Գարեգին վարդապետի Յովսէփեան և Խորէն վարդապետի Մուրադբէգեան, որով կարգեցան անդամք Դիւանական խորհրդոյ։ Թ. Թ. 3, 4, 5։

— Յանուն Սինոդի Ս. Էջմիածնի յաղագս արձակելոյ զՄամբրէ վարդապետն Մելիք-Ադամեան ի հոգևոր կոչմանէ։ Թ. 7։

— Յանուն նոյն Սինոդի վասն կոչելոյ ի Մայր Աթոռ զՀմայեակ վարդապետն Տէր Սարգսեան յԵրևան քաղաքէ։ Թ. 8։

— Յանուն Տ. Առաքնորդի թեմին Հայոց Վրաստանի, որով թոյլ տուաւ թաղել զդի հանգուցեալ Աղէքսանդրի Մատինեանց ի գաւթի վանաց աւագ եկեղեցւոյ Տփխեաց։ Թ. 16։

— Յանուն Տ. Առաքնորդի թեմին Շամախւոյ, որով հաստատեցաւ բացումն եկ.—ծխ. դպրոցի Հայոց Աւանաշէն գեղջ։ Թ. 21։

— Յանուն Տ. Փոխանորդի վիճակին Հայոց Կարուց յաղագս դարձուցանելոյ ի Հայրենիս՝ ի Տաճկահայաստան զԱռաքել քահանայն Տէր Առաքելեան և զԴիոնէսիոս քահանայն Տէր Մինասեան, որք ի Կարս քաղաքի։ Թ. 24։

— Յանուն Սինոդի ս. Էջմիածնի վասն ընդունելոյ զհրաժարական Տ. Խորէն վարդապետի Մուրադբէգեան ի պաշտամանէ գործակալութեան Նոր-Բայազէդի և տալոյ նմա զառոճիկ։ Թ. 30։

— Յանուն նոյն Սինոդի վասն կարգելոյ զՏ. Բարնաբաս վարդապետն վանահայր ս. Կարապետի վանուց Ջանջուլայ։ Թ. 31։

— Յանուն նոյն Սինոդի վասն կազմելոյ զնախահաշիւ հաստատութեանց Մ. Աթոռոյ 1910 ամի։ Թ. 82։

— Յանուն վանահօր Սևանայ մենաստանին վասն բանալոյ անդ զերկդասեան գիշերօթիկ դպրոց։ Թ. 90։

— Կոնդակ յանուն Սինոդի ս. Էջմիածնի, որով առաքեցաւ երկու հազար ռուբլի գումարն, կտակեալն յԵզիայէ Բուդաղեան ի տրամադրութիւն Նորին Սրբութեան Վեհափառ Կաթուղիկոսի Ամենայն Հայոց։ Գումարդ այդ ըստ կոնդակին մնալոց է ի գանձարանի անձեռնմխելի յանուն Հոգևոր Ճեմարանի Մ. Աթոռոյ, իսկ տոկոսիք ծախսելոց են ի պէտս նոյն Ճեմարանի։ Թ. 112։

— Յանուն նոյն Սինոդի վասն կոչելոյ զՏ. Վահրամ վարդապետն Սլկունի ի Մայր Աթոռ։ Թ. 115։

— Յանուն անդամոյ Սինոդի ս. Էջմիածնի Տ. Մատթէոս վարդապետի, որով կարգեցաւ քննիչ գործոյ մեղադրանաց Գրիգոր աւագ քահանայի Սուքիասեան և Ղևոնդ աւագ քահանայի Աթանասեան Երևան քաղաքի ըստ բողոքոյ Երեսփոխանի ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ տեղւոյն։ Թ. 121։

— Յանուն Տ. Մեսրոպ վարդապետի Տէր Մովսէսեան, որով կարգեցաւ ընդ Տ. Տ. Յուսիկ, Իսահակ և Բարգէն վարդապետս և պ. Յ. Մուշեղեանց անդամս կալուածական յանձնախմբի։ Թ. 144։

— Յանուն նախանդամոյ Կոնսիստորիային Երևանայ վասն ծանուցանելոյ հրաժարեալ հոգաբարձուաց թեմական դպրանոցին Երևանայ, եթէ ոչ ընկալեալ լինի հրաժական նոցա, որք ընդ ոչ հրաժարեալ հոգաբարձուս պարտին տալ զբացատրութիւն և զհաշիւ վասն ծախեալ 20,000 ռուբլի դրամագլխոյ կտակին Թայլրեանց։ Թ. 146։

— Յանուն Տ. Առաջնորդի թեմին Հայոց Վրաստանի վասն ստացման դրամատոմսի կտակելոյ ի հանգուցեալ Կարապետէ Վարդանեանց 20,000 ռուբլեաց յանուն ս. Կարապետի վանուց, որ ի Մուշ, և թոյլտուութեան թաղելոյ զկնի մահու այրի Նունեայ Վարդանեանց առ ընթեր ամուսնոյն ի գաւթի Նորաշէն ս. Աստուածածին եկեղեցւոյ Տփխեաց։ Թ. 149։

— Յանուն Տ. Գարեգին Արքեպիսկոպոսի Առաջնորդի թեմին Հայոց Վրաստանի, որով կարգեցաւ Ներկայացուցիչ ի կողմանէ Նորին Սրբութեան ի թաղման հանգուցեալ Դարիայի Մանթաշեան։ Թ. 150։

— Յանուն Գերապատիւ Տ. Գէորգ արքեպիսկոպոսի Սուրէնեան վասն գումարելոյ զմիաբանական ժողովս զինչ ինչ խնդրոց Մայր Աթոռոյս։ Թ. 153։

— Յանուն Տ. Տ. Մատթէոս վարդապետի Մատթէոսեան և Ներսէս վարդապետի Տէր Միքայէլեան։, որովք կարգեցան փոխ անդամք Դիւանական խորհրդոյ։ Թ. Թ. 154 և 155։

— Յանուն Նախագահողի Կոնսիստորիային Երևանայ, որով հաստատեցան ընտրեալ անդամք թեմական խորհրդոյ և անձնափոխանորդք նոցին, նոյնպէս և անդամք վերաստուգող յանձնաժողովոյ։ Թ. 165։

— Կոնդակ յանուն Տիկին Տիրուհւոյ Պոպովեան, որ վասն կտակեալ 50,000 ռ. դրամագլխոյ ի հանգուցեալ Մարգարայ Պոպովեան, տոկոսեօք որոյ բանալոյ է դպրոց մի ի Հայաստան։ Թ. 167։

— Յանուն Տ. Երեմիա վարդապետի, որով պատուիրեցաւ զհին խաչս և զձեռագիր մատեանս, որք ի վանս Հառիճոյ, մատուցանել ի Մ. Աթոռ յանուն Նորին Սրբութեան։ Թ. 187։

— Յանուն Սինոդի ս. Էջմիածնի վասն տալոյ եկեղեցական դպրոցին Քիշնևու ի տարին զ500 ռուբլի նպաստ յարդեանց կալուածոյն «Օդի-զէյզանճի»։ Թ. 190։

— Յանուն գեր. Տ. Գրիգոր արքեպիսկոպոսի վասն տալոյ զկոչումն ծայրագոյն վարդապետութեան Տ. Տ. Մխիթար և Մեսրոպ վարդապետաց։ Թ. 193։

— Յանուն Սինոդի ս. Էջմիածնի վասն ածելոյ յերդումն ի Մայր Տաճարի զՏ. Տ. Ներսէս, Մխիթար, Մեսրոպ և Կարապետ Ծ. վարդապետս։ Թ. 206։

— Յանուն նոյն Սինոդի վասն տալոյ տեղեկութիւն զվանահայրութենէ Զուարթնոց աւերակաց։ Թ. 207։

— Յանուն նոյն Սինոդի վասն պատրաստելոյ զտապանաքար գերեզմանի հանգուցեալ Մկրտիչ Ա. կաթուղիկոսի ամենայն Հայոց։ Թ. 208։

— Յանուն Սինոդի ս. Էջմիածնի վասն հրաւիրելոյ զմասնագէտ հաշուակալ մի յաղագս Սինոդի։ Թ. 209։

— Յանուն նոյն Սինոդի վասն հրաւիրելոյ զգիտակ անձն ի կարգաւորել զգործս Դիւանից Սինոդի և Կաթուղիկոսարանի։ Թ. 210։

— Յանուն Տ. Յուսիկ վարդապետի, որով կարգեցաւ ընդ Բաբգէն և Խորէն Մուրադբէգեան վարդապետս անդամ մասնախմբի չինութեանց, վերանորոգութեանց և բարեզարդութեանց Մայր Աթոռոյս։ Թ. 215։

— Յանուն Տ. Առաջնորդի թեմին Հայոց Վրաստանի վասն տալոյ տեղեկութիւնս զկտակէ և զկտակակատարաց հանգուցեալ Կատարինեայ Նադիրեանց։ Թ. 223։

— Յանուն Առաջնորդի թեմին Հայոց Նոր-Նախիջևանի և Բեսարաբիոյ վասն հաստատման նորընտիր հոգաբարձուաց թեմական դպրանոցին Հայոց Նոր–Նախիջևանի։ Թ. 230։

— Յանուն Վանական կառավարութեան Մ. Աթոռոյ վասն տալոյ Դավրիժեցի Ղևոնդ քահանայի Տէր Աւետսեան զ60 ռ. ի ճանապարհածախս։ Թ. 247։

— Յանուն Տ. Մխիթար եպիս. ժամ. կառ. թեմին Հայոց Աստրախանի, յաղագս կարգելոյ զերկու շրջանային տեսուչս՝ մին վասն հիւսիսային Կովկասու և միւսն շրջանին Թուրքեստանի։ Թ. 284։

— Յանուն Տ. Փոխանորդի վիճակին Հայոց Կարուց յաղագս վերագարձուցանելոյ ի հայրենիս իւրեանց զդաղթական քահանայս վիճակին։ Թ. 301։

— Յանուն պ. Սերովբէի Կիւլպէնկեան վասն յանձ-

նելոյ Տ. Ներսէս եպիսկոպոսի Խարախանեան զմնացեալ առ նմա ի գրամոց հանգուցեալ հոգելոյս կաթուղիկոսի զ477 ռ. 50 կ.։ Թ. 308։

— Յանուն Տ. Ներսէս եպիսկոպոսի վասն ստանալոյ ի Մ. Կիւլպէնկեան զ477 ռ. 50 կ. գումարն յօգուտ որբանոցի Հայոց Տարօնոյ։ Թ. 309։

— Յանուն Կենդրոնական Ուսումնական Յանձնաժողովոյ Մ. Աթոռոյ, որով հաստատեցան նախագահն, քարտուղարն և անդամք։ Թ. 331։

— Յանուն Վարչութեան Հոգևոր Ճեմարանի Մ. Աթոռոյ վասն առաջի առնելոյ զկանոնագիր և այլն։ Թ. 312։

— Յանուն Տ. Յուսիկ արքեպիսկոպոսի, որով կարգեցաւ խմբագիր «Արարատ» ամսագրի։ Թ. 323։

— Յանուն Տ. Իսահակ վարդապետի Տէր Միքայէլեան, որով կարգեցաւ տեսուչ Տպարանի Մ. Աթոռոյ։ Թ. 327։

— Յանուն հոգաբարձութեան Ներսիսեան դպրանոցի Տփխեաց, որով մերժեցաւ խնդիր կենսաթոշակի Նիկողայոսի Տէր Յարութիւնեան ըստ եզրակացութեան հոգաբարձութեանն։ Թ. 331։

— Յանուն Վարչութեան ճեմարանի Մ. Աթոռոյ յաղագս ընդունելոյ ի խնամս իւր զերիս պատանիս, բերեալս ի ձեռն Ներսէս եպիսկոպոսի Խարախանեան ի վիճակէն Տարօնոյ։ Թ. 337։

— Յանուն Տ. Կարապետ եպիսկոպոսի, Առաջնորդի թեմին Ատրպատականի, վասն ձեռնադրելոյ զՎահրամ սարկաւագն Երիցեան ի կուսակրօն քահանայ և կարգելոյ ժամ. վանահայր վանուցն ս. առաքելոյն Թադէոսի։ Թ. 339։

— Յանուն Ամեն. Պատրիարքի Հայոց Պոլսոյ վասն շրջաբերական կարգադրութեամբ ազգ առնելոյ թեմական վիճակաց չձեռնադրել ի քահանայ զընծայացուս, որք ի վիճակաց Հայոց Ռուսիոյ գնան ի Տաճկաստան ի ձեռնադրիլ ապօրինի ճանապարհաւ ի քահանայ։ Թ. 354։

— Ցանուն ժամ. կառավարչի թեմին Հայոց Ասարա-խանի վան կատարելոյ յիւրաքանչիւր ամի յեկեղեցւոջ Հայոց Եկատերինոդարի ի տունի ս. Հրեշտակապետաց զՀո-գեհանգիստ յաղագս հանգուցեալ Միքայէլի Քառասուլեան։ Թ. 356։

— Ցանուն Տ. փոխանորդի վիճակին Կարուց, որով կարգալոյծ առնէ զԿարապետ քահանայն Տէր Մկրտչեանց, զԳէորգ քահանայն Քաղցրիկեան և զԹաչատուր քահանայն Ենկոյեան, որք ապօրինի ճանապարհաւ ձեռնադրեալ են ի քահանայ ի վանս Աղթամարայ և դարձեալ ի գիւղօրայս իւրեանց, որք ի վիճակին Կարուց։ Թ. 367։

— Ցանուն Սինոդի ս. Էջմիածնի վան տալոյ տեղեկութիւնս զքննութենէ հաշուեմատեանից վիճակային և աւանդի դրամոց Կոնսիստորիայից Հայոց Ռուսաստանի։ Թ. 374։

— Ցանուն նոյն Սինոդի վան տալոյ զ200 ռ. ծախս ծաղկանկար կոնդակի (բլանկի)։ Թ. 357։

— Ցանուն Ամեն. Պատրիարքի Հայոց Թիւրքիոյ վան առաքելոյ ի Սինոդ ս. Էջմիածնի զվկայութիւնք ըստ գործոյ կտակի բժշկապետ Աղէքսանդրի Տէր Ցարութիւնեանց։ Թ. 378։

— Ցանուն Տ. Առաջնորդի թեմին Հայոց Վրաստանի, որով հաստատեցան նորընտիր հոգաբարձուք Մարիամեան Յոհանեան օրիորդաց դպրոցին Տփխեաց։ Թ. 381։

— Ցանուն նոյն Առաջնորդի, որով հաստատեցաւ պ. Տիգրանն Ռաշմաճեան տեսուչ յիշեալ դպրոցի միամեայ ժամանակաւ։ Թ. 382։

— Ցանուն Վանական Կառավարութեան Մայր Աթոռոյ վան տալոյ Գէորգ ծ. վարդապետի Նալբանդեան զ30 ռ. ճանապարհածախս ցկ. Պոլիս։ Թ. 386։

— Ցանուն Տ. Իսահակ վարդապետի Տ. Միքայէլեան և Տ. Խորէն վարդապետի Մուրադբէգեան, որով կարգեցան քննել զամենայն հաշիւս ճեմարանի Մայր Աթոռոյ և

կազմել զյուցակ կամ կարասեաց և յանձնել նոր վարչութեան։ Թ. 387։

— Ցանուն Տ. Մատթէոս վարդապետի, որով ըստ ընտրութեան միաբանական ժողովոյ կարգեցաւ ընդ Տ. Իսահակ, Բարգէն և Խորէն վարդապետս և դպիր Գալատի Տ. Մկրտչեան անդամ Ցանձնաժողովոյ վասն կազմելոյ զմիաբանական կանոնագրութիւն։ Թ. 392։

— Ցանուն Տ. Առաջնորդի Թեմին Հայոց Պարսկա-Հնդկաստանի վասն տալոյ զլրացուցիչ տեղեկութիւնս զկտակէ հանգուցեալ Սարգսի Գ. Մկրտումեան։ Թ. 403։

— Ցանուն Ամեն. Պատրիարքի Հայոց Թիւրքիոյ վասն առաքելոյ ի Մայր Աթոռ զպանակէս և զվարդապետական լանջախաչս հանգուցեալ հոգևորականաց։ Թ. 404։

— Ցանուն պ. Սիմէոնի Միրզայեան ըստ խնդրոյ կտակի հանգուցեալ Սարգսի Գ. Մկրտումեան։ Թ. 405։

— Ցանուն Կոնսիստորիային Երևանայ վասն յանդիմանելոյ զԳրիգոր ա. քհն. Սուքիասեան։ Թ. 412։

— Ցանուն Տ. Առաջնորդի Թեմին Հայոց Շամախւոյ, որով հաստատեցան ընտրեալ անդամք թեմական խորհրդոյ և անձնափոխանորդք նոցա, ևս և անդամք վերատուգիչ Ցանձնաժողովոյ։ Թ. 428։

— Ցանուն Տ. Առաջնորդի Թեմին Հայոց Վրաստանի, որով հաստատեցան անդամք Ցանձնաժողովոյ վերանորոգութեան վանուցն Հաղպատայ։ Թ. 430։

— Ցանուն պ. Միքայէլի Ց. Արամեանց, որով հաստատեցաւ պատուաւոր անդամ յիշեալ Ցանձնաժողովոյ։ Թ. 431։

— Ցանուն Տ. Առաջնորդի Թեմին Հայոց Պարսկա-Հնդկաստանի վասն հրաւիրելոյ զՀոգևոր պաշտօնեայս Հայոց Կալկաթայի ի կարգ և յուղղութիւն։ Թ. 432։

Հայրապետական գոհունակութիւնք եւ օրհնութիւնք

Կոնդակ յանուն Պ. Գէորգայ Կարա-Մուրզա Մելիտոպոլի վասն յանձն առնելոյ նոցա կառուցանել զվերին մասն շինութեան բնակարանաց Ս. Խաչ վանուց, որ ի Հին Խրիմ, ծախելով յայդ պէտս զհինգ հազար ռուբլիս։ Թ. 86.

Կոնդակ օրհնութեան և մխիթարութեան յանուն Տփխիսեցի այրի Նունեայ և որդւոցն՝ Տիգրանայ և Իսահակայ Վարդանեանց վասն մահու ամուսնոյ այրի Նունեայ—Կարապետի Վարդանեանց։ Թ. 148.

Կոնդակ մխիթարութեան յանուն պ. Աղեքսանդրի Մանթաշեան վասն մահու ամուսնոյ նորա Դարիայի։ Թ. 152.

Կոնդակ գոհունակութեան, օրհնութեան և խրախուսանաց յանուն Տ. Սրբուհւոյ Գարակէօզեան Ատենապետի խնամակալութեան Որբանոցին Կ. Պոլսոյ վասն նուիրեալ ոսկէթել գործեալ ծածկոցի յաղագս սկհւոյ։ Թ. 191։

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան յանուն կոյս Հռիփսիմեայ Թայիրեանց վասն նուիրաբերեալ կաղամարի միոյ։ Թ. 228։

Կոնդակ օրհնութեան և խրախուսանաց յանուն «Մեղու» ընկերութեան հայոց հեաց Տփխեաց։ Թ. 229։

Կոնդակ գոհունակութեան և օրհնութեան յանուն տիկին Եւփիմեայ Աւետիսեան Ատենապետի ընկերութեան գպրոցասէր կանանց, որ ի Կ. Պոլիս, վասն շնորհաւորելոյ զծնունդն Նորին Ս. Օծութեան։ Թ. 249։

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան յանուն Առաջնորդի Հայոց Եւրոպիոյ Տ. Գէորգ Եպիսկոպոսի Իւթուճեան վասն շնորհաւորելոյ զծնունդն Նորին Ս. Օծութեան։ Թ. 250։

Կոնդակ գոհունակութեան և օրհնութեան յանուն Աբրահամ Փաշայի Բարթող վասն շնորհաւորելոյ զծնունդն Նորին Սրբութեան։ Թ. 314։

Կոնդակ շնորհաւորութեան և օրհնութեան յանուն Գաբրիէլ Էֆէնտիի Նորատունկեան վասն տարեդարձի անուանակոչութեան։ Թ. 369։

Հայրապետական պարգեւք

Կոնդակք յանուն Տ. Տ. Ներսէս, Մխիթար, Մեսրոպ և Կարապետ եպիսկոպոսաց, որովք շնորհեցան եպիսկոպոսական պանակէք։ Թ. 280, 281, 282 և 283։

Կոնդակ յանուն Տ. Մեսրոպ վարդապետի Նշանեան, միաբանի Ս. Աթոռոյն Երուսաղէմի, որով շնորհեցաւ վարդապետական լանջախաչ։ Թ. 310։

ԲԱՂՈՒԱԾՔ ԾՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ

—Սեպտ. 2-ին Սինոդը որոշեց Տ. Նիկողայոս վարդապետին ուղարկել Երնջակի ս. Կարապետ վանքը որպէս միաբան նոյն վանքի։ Թ. 521.

—Նոյն օրը Սինոդը լսելով Վարդան Արզումանեան (Իգդիրմաւա), Մկրտիչ Զաքարեան (Իգդիր), Ներսէս Տէր-Գրիգորեան (Ալիջան), Գարեգին Գալստեան (Հախվերիս), Յովսէփ Տէր-Կարապետեան (Խալֆալու) և Անդրէաս Խուդոյեան (Դաշքուռուն) հանգուցեալ քահանաների վրայ «Արարատ» ամսագրի հաշուից մնացած ապառիկների գործը, որոշեց գործը կարճել և նկատողութիւն անել Երևանի Կոնսիստորիային իր անփութութեան համար։ Թ. 524.

—Նոյն օրը Սինոդը լսեց Թալինցոց գրաւած 4 դես. հողի գործը, որը բացել է վանքի երկրաչափ Կոմարովսկին, կառավարութեան ներկայացուցիչ երկրաչափ Լիսովսկու հետ միասին, որոշեց տալ երկրաչափ Կոմարովսկուն որպէս ճանապարհածախս 21 ր. 18 կ.։ Թ. 525.